«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր՝ 2019

Դեկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն Սուքիաս Թորոսյանի 60-ամյակի առթիվ Թեքեյան կենտրոնում կայացած հեղինակի երգիծանկարների ցուցահանդեսին եւ «Փոքր երկրի մեծ իրադարձությունները» երգիծանկարների նորատիպ ժողովածուի շնորհանդեսին:

Նոյեմբեր, 2019թ.

- «Անվճար դասագրքեր 2019/2020» ծրագրի շրջանակում Ստեփանավանի, Գյումրիի, Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 141 անապահով աշակերտներին 2,009 դասագրքի տրամադրում:

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի տպագրություն:

Հոկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն Արշակ Չոպանյան ինստիտուտի կողմից կազմակերպված քաղաքական գիտությունների դոկտոր Քերոլայն Գալասթերոսի հեղինակած «Դեպի նոր Յալթա» գրքի շնորհանդեսին:

Սեպտեմբեր, 2019թ.

- Ֆինանսական օժանդակություն Ստեփանակերտի «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին եւ Երեւանի «Աջակցություն վիրավոր զինվորներին եւ զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ-ին:

- Հանդիպում-քննարկում «Հայոց ցեղասպանություն. Նախերգանք եւ հետգրություն. հաղորդումներ ամերիկյան մամուլում» 10 հատորանոց անգլերեն մատենաշարի համահեղինակ, ավստրալահայ գործիչ Արա Քեթիպեանի հետ:

- «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի հիմնադիր մարմին Լոնդոնի Թեքեյան Խնամակալ Մարմնի 40-ամյա հոբելյանը Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Օգոստոս, 2019թ.

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի շնորհանդես:

- «Ամառային ճամբար» ծրագրի տասներորդ շրջան. Հայաստանի եւ Արցախի թեքեյանցի 71 շահառուի 8-օրյա հանգստի կազմակերպում եւ հովանավորում Հանքավանի «Արագած» ճամբարում:

Հունիս, 2019թ.

- Սպիտակի աղետալի երկրաշարժի 30-րդ տարելիցի կապակցությամբ ռուս լուսանկարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, լեռնային փրկարար, միջազգային կարգի սպորտի վարպետ Եվգենի Ժիլյաեւի անհատական ցուցահանդեսը՝ «Սպիտակ. 5 րոպե լռություն» խորագրով:

Ապրիլ, 2019թ.

- Լիբանանի «Ծաղիկ» գրական ազգային շաբաթաթերթի հետ համատեղ մշակութային երեկո՝ նվիրված մեծն Կոմիտասի եւ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին:

- Լիբանանի «Ծաղիկ» գրական ազգային շաբաթաթերթի հետ համատեղ գրական-երաժշտական երեկո՝ նվիրված հայ մեծ գրողներ Լեւոն Շանթի եւ Երվանդ Օտյանի 150-ամյակներին:

- «Թեքեյանական 9-րդ օլիմպիադա» գիտելիքների ամենամյա մրցույթ մաթեմատիկա, անգլերեն, հայոց լեզու եւ գրականություն առարկաներից: Մասնակիցներ՝ 85 աշակերտներ Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի, Կարբի գյուղի եւ Արցախի՝ Բերձորի, Վ. Թեքեյանի անվան դպրոցներից, ինչպես նաեւ Հայաստանի սիրիահայ համայնքից: Մրցանակների սահմանում, այցելություն Պատանի հանդիսատեսի թատրոն, մշակութային ձեռնարկ:

- Լիանա Հայրապետյանի եւ Փիթեր Սաթոնի հեղինակած «Poems of Armenian War and Peace» գրքի տպագրություն:

Մարտ, 2019թ.

- Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում 2 դասասենյակների վերանորոգում:

Հունվար, 2019թ.

- PhotoPodium.com կայքի հետ համատեղ՝ «B & W» /Black & White/ միջազգային լուսանկարչական ցուցահանդեսը:

Հունվար – դեկտեմբեր, 2019թ.

- Աջակցություն մի շարք հայաստանյան հասարակական, մշակութային, տեղեկատվական կազմակերպությունների, այդ թվում ՀԹՄՄ: